

ՔԼՔՈՒՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԻ ԲԱԽՏ Է ՏՐՎԱԾ

Մեկը ցավ է տալիս կյանքիդ,
Մեկը սեր ու խիճնդ նվիրում,
Մերթ ծիծաղ ես խառնում երգիդ,
Մերթ արցունքով տողդ գրում:

Եվ զուր է այլ ճամփա բացել,
Խաղաղ մի ափ ելնել անդարձ,
Չո՛ւր է օրհնել կամ անիծել–
Քեզ մի կյանք, մի բախտ է տրված:

Այսպե՛ս – ապրել՝ սիրտ ու հոգի
Խռիվ հոսքում խենթ օրերի,
Որ ոչ գիտեն ընթացքն իրենց,
Ոչ վախճանը՝ չար կամ բարի:

Այսպես – քայլել ու չդողալ,
Որ առջևում, թաքուն անհայտ,
Ե՛վ սերն է քո ճամփան պահում,
Ե՛վ ցավն է միշտ հսկում վրադ:

Քայլել ու գոհ ժպտալ սիրուն,
Ժպտալ...ցավին դարանակալ:

ԼՈԿ ԻՐԱՐ ՀԱՄԱՐ

Մեր հանդիպումն այս կանխորոշված էր,
Նախանշված էր գուցե ի վերուստ,
Քո հայացքի տակ ես մոռանում եմ
Հոգսերն իմ բոլոր և ցավ ու կորուստ:

Քեզանից հեռու, քեզ դեռ անծանոթ
Ապրել եմ մի կյանք կիսատ ու թերի,
Չհասկանալով՝ ինչի՞ց եմ խռով,
Ինչո՞ւ է տրտում հոսքն իմ օրերի...

Ինձանից հեռու, ինձնից անգիտակ՝
Ափերն ես փնտրել դու երջանկության,
Չկռահելով՝ ինչո՞ւ շարունակ
Մշուշն է պատում քեզ ունայնության...

Հիմա ամեն բան պարզ է վերջապես.
Մեր հանդիպումն այս պիտի կայանար.–

Բախտն ուրիշներից խլել պարզապես՝
Մեզ պահպանել է լոկ իրար համար: